Հ Ու Շ Ա Գ Ի Ր

համագործակցության մասին

ք. Գյումրի «23» ապրիլի 2022թ.

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է «Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամի և Շիրակի մարզում գործող քաղաքացիական հասարակության և կրթական կառույցների ու անհատ փորձագետների միջև (այսուհետ Կողմեր):

Նկատի ունենալով, որ Կողմերը շահագրգռված են թվային անվտանգության ոլորտում միմյանց հետ սերտ համագործակցության մեջ, կարևորում են այդ ոլորտում քաղաքացիական հասարակության և կրթական հաստատությունների համագործակցությունը, գիտակցում են թվային անվտանգության մարտահրավերներին դիմակայելու գործունեության կարևորությունը և այդ ուղղությամբ քաղաքացիական հասարակության մասնակցության արդյունավետությունն ու նպատակահարմարությունը,

Նկատի ունենալով, որ Կողմերը կիսում են նմանատիպ առաքելություն և ցանկանում են համագործակցել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտում, որպեսզի բարձրացնեն զարգացմանն ուղղված իրենց ջանքերի արդյունավետությունը,

Հաշվի առնելով, որ աշխարհում և Հայաստանում առկա իրավիճակով պայմանավորված թվային ռիսկերը և դրանց ազդեցությունը հասարակական հիմունքներով աշխատող կազմակերպությունների վրա գնալով ուժգնանում է,

Գիտակցելով, որ Շիրակի մարզում գործող հասարակական կազմակերպությունների և կրթական հաստատությունների կառավարման, փաստաթղթաշրջանառության և հաղորդակցության ուղղություններով թվային անվտանգության հիմնահարցերը օրակարգային են և կարիք ունեն առաջնահերթ ուշադրության,

Գիտակցելով, որ Շիրակի մարզում գործող հասարակական կազմակերպությունների և կրթական հաստատությունների թվային գրագիտության և թվային անվտանգության ուղղությամբ շահառուների հետ տարվող աշխատանքները և շահառուների իրազեկվածության մակարդակը բարելավման անհրաժեշտություն ունի,

Գիտակցելով, որ Շիրակի մարզում գործող քաղաքացիական հասարակության կառույցների և կրթական հաստատությունների թվային անվտանգության և շահառուների թվային գրագիտության ուղղությամբ իրազեկվածության վերաբերյալ աուդիտ իրականացնելու և այդ ուղղությամբ թվային և ֆիզիկական անվտանգության միջոցների բարելավման անհրաժեշտությունը մեծ է,

Կողմերը եկան հետևյալ համաձայնության.

Հոդված 1.Նպատակը

Հուշագրի նպատակն է նպաստել համագործակցության շրջանակին, համախոհների ցանցի ընդլայնմանը եւ օժանդակել Կողմերի միջև գործակցությանն ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում:

Հոդված 2. Համագործակցության ոլորտներ

Կողմերը համաձայնում են համագործակցել գործունեության հետևյալ ոլորտներում՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ.

- Թվային անվտանգություն և թվային ռիսկերի կանխարգելում,
- Էլեկտրոնային գրագիտություն,
- Էլեկտրոնային հաղորդակցություն,
- Թվային անվտանգություն և էլեկտրոնային գրագիտություն աշխատաշուկայում և կրթական միջավայրում,
- Անձնական տվյալների պաշտպանություն,
- Անվտանգությունն առցանց սոցիալական միջավայրում,
- Ֆիզիկական անվտանգությունը թվային անվտանգության համատեքստում,
- Մեդիագրագիտություն և քննադատական մտածողություն:

Կողմերը նաև պատրաստակամություն են հայտնում համագործակցել քննարկումների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպման հարցում և ջանքեր գործադրել Հուշագրում նշված նպատակներին հասնելու համար:

Նման միջոցառումների կազմակերպման համար Կողմերը դրամական կամ այլ գույքային ներդրում անելու որևէ պարտավորություն չեն ստանձնում:

Հոդված 3.Խորհրդակցում և տեղեկատվության փոխանակում

3.1 Կողմերը պատրաստակամություն են հայտնում պարբերաբար իրականացնել փոխադարձ հետաքրքրություններ կայացնող տեղեկատվության փոխանակում և համագործակցության հնարավորությունների քննարկում:

3.2 Այս հոդվածով նախատեսված դեպքերում խորհրդակցումը և տեղեկատվության ու փաստաթղթերի փոխանակումը պետք է կատարվեն առանց վնասելու այնպիսի ընթացակարգեր, որոնք կարող են պահանջվեն ապահովելու համար որոշակի տեղեկատվության և փաստաթղթերի գաղտնիություն և հասանելիության սահմանափակ բնույթ:

3.3 Կողմերը համաձայնվում են չհրապարակել որևէ տեղեկատվություն, որն իրենց տրամադրվել կամ հայտնի է դարձել սույն Հուշագրի շրջանակում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տեղեկատվությունը հասանելի է հանրությանը կամ երբ առկա է հրապարակման վերաբերյալ Կողմերի համաձայնությունը:

3.4 Կողմերը հանդիպում են ըստ անհրաժեշտության սույն Հուշագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների արդյունքները գնահատելու և հետագա աշխատանքները ծրագրելու նպատակով:

3.5 Կողմերից յուրաքանչյուրը նշանակում է սույն Հուշագրի արդյունավետ իրականացման համար պատասխանատու անձանց:

Հոդված 4.Հուշագրի իրականացումը

4.1 Սույն Հուշագիրը կնքելով Կողմերը չեն ստեղծում որևէ ընկերակցություն կամ այլ իրավաբանական անձ, չեն մտնում համատեղ գործունեության կամ պայմանագրային այլ հարաբերությունների մեջ:

4.2 Սույն Հուշագիրը Կողմերի համար որևէ ֆինանսական կամ այլ գույքային պարտավորություններ չի ստեղծում:

4.3 Սույն Հուշագրին մասնակցությունը չի կարող որևէ ազդեցություն ունենալ խորհրդատվական ծառայությունների հնարավոր ձեռքբերման վրա՝ Կողմերից որևէ մեկին առավել կամ նվազ արտոնյալ կարգավիճակ տալու տեսանկյունից:

4.4 Սույն Հուշագիրը չի կարող մեկնաբանվել որպես Կողմերից որևէ մեկի համար տրված որևէ երաշխիք, դրական գնահատական կամ աջակցության խոստում:

4.5 Կողմերը համաձայնվում են, որ Հուշագրի ստորագրման և գործողության մասին տեղեկատվությունը կարող է տարածվել առանց սահմանափակումների, ներառյալ՝ մամլո հաղորդագրությունների, ինտերնետ կայքերի և տեղեկատվական բուկլետների միջոցով:

4.6 Կողմերից ոչ մեկը չի կարող լինել մյուսի գործակալը, ներկայացուցիչը կամ որևէ երրորդ կողմի համատեղ գործընկերը: Կողմերից ոչ մեկը մյուս կողմի անունից չի կարող մտնել պայմանագրային հարաբերությունների մեջ կամ ստանձնել պարտավորություն:

4.7 Կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում իր գործողությունների և բացթողումների համար՝ կապված ներկա Հուշագրի և դրա իրականացման հետ:

Հոդված 5. Անվանման և խորհրդանիշի օգտագործումը

5.1 Կողմերից որևէ մեկը չի կարող օգտագործել մյուս կողմի կամ մյուս կողմի որևէ ստորաբաժանման և/կամ մասնաճյուղի անվանումը, խորհրդանիշը կամ ապրանքանիշերը կամ նրանց որևէ հապավում՝ առանց յուրաքանչյուր նման դեպքում նախօրոք ստանալու մյուս կողմի հստակ գրավոր համաձայնությունը:

5.2 Կողմերը համաձայնում են պատշաճ կարգով ընդունել և հաստատել սույն գործընկերությունը: Նշված նպատակով, Կողմերը նշված ընդունման և հաստատման եղանակի և ձևի վերաբերյալ պարտավոր են խորհրդակցել միմյանց հետ:

Հոդված 6. Տևողությունը, դադարեցումը, փոփոխումը

6.1 Սույն Հուշագրի ներքո առաջարկվող համագործակցությունը ոչ բացառիկ պայմաններով է և Կողմերից յուրաքանչյուրն ազատ է նմանատիպ հարաբերություններ հաստատել այլ անձանց հետ:

6.2 Սույն Հուշագիրը գործում է 5-ամյա ժամկետում մինչև 2027 թվականի ապրիլի 30-ը և Կողմերից յուրաքանչյուրը կարող է վաղաժամկետ լուծել այն՝ այդ մասին առնվազն երկու շաբաթ առաջ տեղեկացնելով մյուս Կողմերին:

6.3 Այս Հուշագիրը կարող է փոփոխվել միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

Հոդված 7. Ծանուցումը և հասցեները
Սույն Հուշագրի շրջանակում Կողմերի միջև ցանկացած ծանուցում կամ այլ հաղորդակցություն կատարվում է գրավոր՝ առձեռն, փոստով, սուրհանդակի միջոցով, հեռագրով կամ էլեկտրոնային փոստի հասցեով:

Հոդված 8. Այլ հարցեր
8.1 Կողմերից որևէ մեկի կողմից սույն Հուշագրի դրույթներից մեկը չկատարելը չի կարող մեկնաբանվել որպես հրաժարում Հուշագրի տվյալ կամ այլ դրույթից: Հուշագրի դրույթներից որևէ մեկի անիրագործելիությունը չի ազդում մյուս դրույթների գործողության վրա, եթե դրանք կարող են գործել առանց խնդրահարույց դրույթի կիրառման:
8.2 Սույն Հուշագիրը մտադրությունների մասին հուշագիր է, որն արտահայտում է Կողմերի՝ համագործակցելու ցանկությունը և պատրաստակամությունը և չի պարունակում իրավաբանորեն պարտադիր դրույթներ՝ բացառությամբ սույն Հուշագրի Հոդված 3-ում նշված տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու վերաբերյալ դրույթների:

Հոդված 9. Ուժի մեջ մտնելը
9.1 Սույն հուշագիրը կնքվում է «Էլեկտրոնային գրագիտության և թվային անվտանգության դպրոց» ծրագրի շրջանակում, որն իրականացնում է «Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամի կողմից, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության, Սիդայի աջակցությամբ իրականացվող «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագրի շրջանակում:
9.2 Սույն հուշագրի գործունեությունը չի սահմանափակվում այն ծրագրով, որի շրջանակում կնքվել է:
9.3 Սույն հուշագիրը և հուշագրով ստեղծված ցանցի համագործակցությունը կարող է կիրառվել այլ նախագծերում՝ Կողմերի համաձայնության պարագայում:
9.4 Սույն Հուշագիրը ստորագրված է 1 (մեկ) օրինակից, որը կողմերին է ուղարկվում սկանավորած տարբերակով, որոնցից յուրաքանչյուրը համարվում է բնօրինակ, որոնք միասին պատշաճ կարգով գործարկվելու դեպքում կազմում են մեկ միասնական փաստաթուղթ, որն ուժի և գործողության մեջ է մտնում այն օրը («Գործարկման ամսաթիվ»), երբ Կողմերը պատշաճ կարգով ստորագրում են այն:

Հոդված 10: Կողմերի վավերապայմաններ

1. Ա.Դ Սախարովի անվան ՄԻՊ հայկական կենտրոնի Շիրակի մ/ճ
2. «Խորան Արդ» ինտելեկտուալ կենտրոն ՀԿ
3. «Գյումրու Ինֆոտուն» Նախաձեռնություն
4. «Ախուրյանի համայնքային զարգացման ասոցացիա» ՀԿ
5. «Ինթրա» հեգեբանական ակումբ ՀԿ
6. «Ալվան ծաղիկ» սոցիալ-կրթական ՀԿ
7. «Էմիլի Արեգակ» բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենտրոն
8. «Կոնտակտ Պլյուս» իրավապաշտպան ՀԿ

9. «ԿԱՋԱ» Շվեյցարական մարդասիրական հիմնադրամ
10. Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ
11. «Կանանց իրավունքների տուն» ՀԿ
12. «Լիության տուն» ՀԿ
13. «Գյումրու առաջընթաց» քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն ՀԿ
14. «Վանանդ» ՀԿ
15. «Առավոտ» բարեգործական ՀԿ
16. «Գյումրու երիտասարդական պալատ» ՊՈԱԿ
17. Մեծահասակների կրթության «Խաչմերուկ» հիմնադրամ
18. «Կարա Մուրզայի անվան երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ
19. «Նոր Լույս» Մենթորինգ Կենտրոն Երիտասարդների Համար ՀԿ
20. «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն
21. «Ճիշտ ուղի» սոցիալ-կրթական, մշակութային ՀԿ
22. Էլմիրա Փանոսյան՝ Դասընթացավար
23. Ագապի Մանուկյան՝ Իրավաբան